ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«15 օգոստոսի» 2017 թվականի № 103-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2015 թվականի դեկտեմբերի 21-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ-97 և 2016 թվականի փետրվարի 12-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության» թիվ 4128 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2016 թվականի ապրիլի 5-ի թիվ Ֆ-129/16 գրությունը և «Մ.Մ.Պ» ՍՊԸ-ի 2016 թվականի փետրվարի 19-ի թիվ 01 դիմումը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Մ.Մ.Պ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 30 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/537 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուրի հրաբխային ավազի հանքավայրի՝ 1.X=4461556 Y=8512941, 2.X=4462026 Y=8512843 3.X=4462005 Y=8512905 4.X=4462033 Y=8512939, 5.X=4461583 Y=8513062 (տրված են՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքում արդյունահանման աշխատանքներ կատարելու համար, հատկացնելով՝ 480.0 հազար մ^3 հրաբխային ավազ և լեռնահատկացման թիվ L-537 ակտը՝ 1.X=4461541 Y=8512903, 2.X=4462040 Y=8512833, 3.X=4462049 Y=8512967, 4.X=4461579 Y=8513075 (տրված են՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 7.62 հա տարածքով:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 16.0 հազար մ^3 հրաբխային ավազ:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուրի հրաբխային ավազի

հանքավայրի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-537 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5 Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ